

գմա, եւ կամ սրբոյ վանիցն. զի այնպիսին աստուածային հրամանին եւ մեր իշխանութեանս լինիցին ներհակք, որ եւ ոչ մնացի առանց պատժոց: Իսկ կատարողք հրամանաց մերոց օրհնեսցին ի յԱստուծոյ. եւ ի սրբոյ Իջմանտեղւոյն Բանին Աստուծոյ, եւ ամենայն Սրբոցնորա, եւ ի մէջ, ամէն:

Գրեցաւ առաջնորդական  
եւ վկայական Կոնդակս  
ՌՃՂ թուին, ի փետր-  
վարի մուտն, առ զրան  
Սուրբ Էջմիածնի:

[Ձեռագիր Մատենադարանին Մխիթարեանց  
Վիեննայ թիւ 564:]

Սարգսի Պոլսէն մեկնելէն ետեւ՝ բազմաթիւ գրութիւններ (Գիւ. Լիվ.) զրկուեցան իրեն, իրեն հետեւող մեծամեծներէն ու բարեկամներէն: Եւ ինչպէս Ստեփ. Վ. Աբրահայր Մխիթարեանց Վենետիկէն կը գրէ 9 Յունուար 1773ին առ Սարգիս Արքեպ. ասոր Պոլսէն անակնկալ մեկնելուն պատճառաւ «բարեկամք գերապայծառութեանդ արտմեալ են եւ այլք զարմացեալ եւ ապշեալ...»: 14/25 Նոյ. 1772ին ի Վէզիր խան գրուած նամակի մը մէջ՝ իրենց ցաւը կը յայտնեն անոր Պոլսէն հեռանալուն եւ իրմէ զրկուելուն համար եւ յաջողութիւն կը մաղթեն հետեւեալ ստորագրողներ. «Մարտիրոս մահտեսի Յակոբ Հովուեանց, Պօղոս եւ Չօպան Պետրոս, եւ Գարրիէլ, եւ Աղեքսանդր, Նիկողոս, Միքայէլ, Աբրահամ, Հաճի Տատ, փոքրիկ Մկրտիչ, Յօհաննէս նօտար Պէկղօզեան, Յարութիւն Հովուեան, Թօմա, Յօ-